ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 146-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2023 թվականի N ____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 146-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-556-Ն օրենքի 73-րդ հոդվածի 12-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի փետրվարի 18-ի «Բռնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված, դատավորի կողմից պետությանը հանձնված՝ թույլատրելի չհամարվող նվերը և ժառանգության իրավունքով պետությանն անցած նյութական ու դրամական արժեքներն օգտագործելու և դրանք հանձնելու, հաշվառելու և ոչնչացնելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 1999 թվականի օգոստոսի 4-ի N 494 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 146-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրից հանել «, դատավորի կողմից պետությանը հանձնված՝ թույլատրելի չհամարվող նվերը» բառերը,

2) Որոշման 1-ին կետից հանել «, դատավորի կողմից պետությանը հանձնված՝ թույլատրելի չհամարվող նվերը» բառերը,

3) Որոշման հավելվածով սահմանված կարգի վերնագրից և տեքստից հանել «, դատավորի կողմից պետությանը հանձնված՝ թույլատրելի չհամարվող նվերը» բառերը,

4) Որոշման հավելվածով սահմանված կարգի 2-րդ կետից հանել «, դատավորի կողմից պետությանը հանձնված՝ թույլատրելի չհամարվող նվերի հետ կապված

գործերով՝ Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեն»,

5) Որոշման հավելվածով սահմանված կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «, իսկ դատավորի կողմից պետությանը հանձնված՝ թույլատրելի չհամարվող նվերի դեպքում՝ թողնվում են Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-556-Ն օրենքի 73-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված՝Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից նվերների հաշվառման և հանձնման կարգի ուժի մեջ մտնելու օրը:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան

2023 թ. _____-ի __

Երևան